

# Ա Է Ե Տ Ա Բ Ե Բ



«ԹՈՂ ՏՈՒԻՔ ՄԱՆԲ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ.» ԴՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԻԹ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՅՈՒԼԻՍ 1, 1900

ԹԻԻ 7

## ԶՆԵՐՈՂ ԾԱՌԱՆ

Մեր Տէրոջ առակներուն մեծ մասը Մատթէոսի և Դուկասի Աւետարաններուն մէջ կը գտնուի: Անոնք երեսուներեք հատ են: Մատթէոս կը պատմէ ասոնցմէ տասներեքը, Դուկաս՝ տասներեքը, բայց Մարկոս՝ միայն չորսը, իսկ Յովհաննէս անոնցմէ ոչ մէկը կը պատմէ: Աւետարաններուն միևնոյն չըլլալը, այսինքն իրարմէ որչափ տարբեր ըլլալը, կը տեսնուի սա բանին մէջ որ Մատթէոսի պատմած տասներեքը առակներէն տասներկուքը չեն գտնուիր միւս Աւետարաններէն ունէ մէկուն մէջ: Միայն Մատթէոսի պատմած առակներէն մէկն է չներող ծառային առակը: Այս առակը կը սորվեցնէ ինչ որ կը սորվեցնէ Տէրունական Աղօթքը: Շատեր, որ կ'ըսեն այս աղօթքը, Աստուծոյ կը խնդրեն որ իրենց չներէ: «Մեզի ներէ մեր պարտքերը՝ Ինչպէս որ մենք ալ կը ներենք մեր պարտականներուն»: Կ'աղօթեն որ, ինչպէս որ իրենք չեն ներեր իրենց պարտականներուն, Աստուծոյ պատասխանէ իրենց աղօթքներուն չներելով իրենց:

Բայց ինչո՞ւ քրիստոս այսպիսի խնդրուածք մը դրաւ Տէրունական Աղօթքին մէջ, քանի որ գիտէր թէ դժուար է ներել, և թէ շատեր այդպիսի խնդրով իրենց վրայ անէծք կը հրաւիրեն: Վասն զի գիտէր թէ ասիկա Աստուծոյ ներումն ընդունելու



## II

հաստատուն պայման մըն է, ինչպէս ինքը կը բացատրէ մարգարէի բարբարոս զոյգ իրենց յանցանքները, ձեր Հայրն ալ ձեզի յանցանքները: Աստուծոյ պահանջներ որ մենք կատարեալ ըլլանք որպէս զի ներում ընդունինք, ոչ ալ որ ներման արժանի ըլլանք, հապա կը

պահանջէ որ ներենք ուրիշներու: Առանց ասոր անյարմար ենք Աստուծոյ ներում ընդունելու: Պատճառ մըն ալ սա է որ մեր Աստուծոյ ունեցած պարտքը ունէ մարդոց մեզի ունեցած պարտքէն շատ մեծ է: Տարբեր տաղանդ պարտքը զոր չներող ծառան ունէր իր տիրոջը, իր ծառայակցին իրեն ունեցած պարտքին վաճառուն միջին անգամն էր: Երբ անիկա իր տիրոջմէն այսքան

գուլթ և ներման չնորճ վայելեց, պէտք էր որ իր սիրտը կակուղնար և պատրաստ ըլլար իսկոյն ցուցնել աւելի փոքրիկ գուլթը դէպ իր ծառայակիցը: Եւ երբ ցուցուց թէ իր սիրտը կարծր էր և անգուլթ, միւս ծառաներն ամէնն ալ զգացին թէ անիկա անարժան էր իր տիրոջ մեծ մարդասիրութեանը, և անտարակոյս իովին արդարացուցին անոր վրայ արձակուած վճիռը:


**ՀԱՐՈՒՍՏ ՏՂԱՅ ՄԸ**

«Ո՛հ,» ըսաւ Բենիկ, «երանի՛ թէ հարուստ ըլլայի և մեր դպրոցը գացող քանի մը տղոց բաներուն պէս բաներ ունենայի:» «Բենիկ,» ըսաւ հայրը, արագ մը չորս կողմ նայելով, «ի՛նչ կ'ուզես քու սրունքներուդ համար:» «Իմ սրունքներուս համար,» հարցուց Բենիկ զարմանքով: «Այո, անոնք ինչի՛ կը գործածես:» «Ես անոնցմով կը վազեմ, կը ցատկեմ, գնտակ կը խաղամ և, ո՛հ, ամէն բան կ'ընեմ:» «Շիտակ է,» ըսաւ հայրը, «դուն 10,000 տողարի չես տար դանոնք, այնպէս չէ:» «Ո՛չ, չեմ տար,» պատասխանեց Բենիկ ժպտելով: «Քու բազուկներդ, կարծեմ զանոնք 10,000 տողարի չես տար: Կու տա՞ս:» «Ո՛չ,» «Չայնք: Կ'ըսեն թէ աղուոր կ'երգես, և ես գիտեմ որ բաւական կը խօսիս: Չայնք կը փոխե՞ս 10,000 տողարի հետ:»

«Ո՛չ,» «Քու առողջութի՛նդ:» «Ո՛չ,» «Քու լսելու և ճաշակելու կարողութիւններդ դէթ 5,000 ական տողարէ աւելի աղէկ են. դուն ալ այսպէս չե՞ս խորհիր:» «Այո, այդպէս է:» «Հիմա գանք աչքերուդ: Կ'ուզե՞ս անոնց համար ընդունիլ 50,000 տողար և կոյր ըլլալ քու կեանքիդ մնացած օրերուն մէջ:» «Ամենևին չեմ ուզեր:» «Խորհէ վայրկեան մը, Բենիկ, 50,000 տողարը քիչ ստակ չէ: Վստահութիւնով կ'ըսես թէ զանոնք չես ծախեր այդչափ ստակի փոխարէն:» «Այո:» «Ուրեմն անոնք դէթ այդչափ կ'արժեն: Տեսնենք հիմա,» շարունակեց հայրը, թուղթի մը վրայ գրելով, սրունքներ՝ 10,000 տողար, բազուկներ՝ 10,000, ձայն՝ 5,000, լսողութիւն՝ 5,000, ճաշակելիք՝ 5,000, առողջութիւն՝ 10,000 և աչքեր՝ 50,000, որոնց դումարը կ'ըլլայ 100,000 տողար: «Տղաս, դուն 100,000 տողար արժէք

ունիս, ամենէն ցած թիւերը դնելով: Հիմա վազէ և խաղա, ցատկէ, նետէ գնտակդ, խնդա և լսէ քու ընկերներուդ ալ խնդալը: Նայէ այդ 50,000 տողար արժող աչքերովդ շուրջդ գտնուած գեղեցիկ առարկաներուն վրայ, և տուն եկուր քու ճաշի սովորական ախորժակովդ, և մտածէ ատեն ատեն թէ դուն իրաւ իրաւ ո՛րչափ հարուստ ես:»

Ասիկա եղաւ դաս մը զոր Բենիկ երբեք չմոռցաւ, և այդ օրէն ի վեր ամէն անգամ որ կը տեսնէ անդամալոյծ մը կամ կոյր մը, կը խորհի թէ չնորհակալ ըլլալու ո՛րչափ բաներ ունի: Այսպէս գո՛հ ըլլալ սորվեցաւ:



**ՊՈՒՏՏԱՅԻ ԱՌԱՋԻՆ ՀԻՆԳ ՀԱՐՈՒՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ**  
Նակոյս, մեծութեան նայելով, ճափոնի չորրորդ քաղաքն է: Ունի 350,000 բնակիչ: Յախճապակի շինութեան գլխաւոր կեդրոնն է: Ունի բնակիչներէն շատը յախճապակի նկարներ գծելու, յախճապակի թրծելու և ապիկելու (որը վերմէք) կը զբաղին: Ճափոնցիք նմանցներու մեծ տաղանդ ունին, և յախճապակիի վրայ ճիշդ կը նկարեն իրենց տրուած ունէ պատկեր: Բաղաքին նշանաւոր ուրիշ մէկ բանն է բերդը, ընտիր քարերէ ընդարձակ շէնք մը որ 1610 ին չինուեցաւ, և կ'ըսուի թէ 25,000 պաշտպանողներու կը բաւէ: Կայ նաև Պուտտայական շատ սիրուն տաճար մը, դրսէն ու ներսէն գեղեցիկ, զոր «Բարեկարգեայ Պուտտայականք» կոչուած աղանդաւորները շինած են: Կ'ըսուի թէ ասոնք հաւատքով արդարանալու վարդապետութիւն մը


**ԲԱՆԵՐՈՒՆ ՍԿԻՉԲԸ**  
Ամէն բան սկիզբ մը ունի, և աղէկ է որ երբեմն ետ նայինք հասանքէն դէպ ի անոր ալը և գտնենք մեր բուրոտիքը տեսնուած բաներուն սկիզբը: Ա՛գրիբէն թերթ մը կ'ընէ պատմութիւն մը փոքրիկ աղջկան մը վրայ որ սապէս ըսաւ իր մօրը.  
«Ես կ'ուզեմ եղիպտացորենէ քաքար (չէօրէք) մը սկսի անոր սկիզբէն: Ի՞նչ պէս կը սկսուի:» Մայրն ըսաւ, «Եթէ կ'ուզես սկիզբէն սկսիլ, պէտք է որ խոհանոցի երթաս և ալիւրով սկսիս:» Աղջիկը խոհանոց գնաց և ըսաւ խոհարարին, «Քաքարը հո՞ս կը սկսի: Կ'ուզեմ սկիզբէն սկսիլ և քաքար մը չինել: Հաճեցեք ինձի քիչ մը ալիւր տալ:» Խոհարարն ըսաւ, «Եթէ կ'ուզես սկիզբէն սկսիլ և քաքար մը չինել, պէտք է որ նպարավաճառին երթաս: Ալիւրը նպարավաճառէն կու գայ:» Աղջիկը նպարավաճառին գը-

նաց և հարցուց թէ քաքարը հո՞ս կը սկսի:” Եպարավաճառն ըսաւ, «Եթէ կ’ուզես սկիզբէն սկսիլ, պէտք է որ ջաղացպանին երթաս: Իմ ախրս ջաղացպանին կու գայ:” Աղջիկը ջաղացպանին գնաց և ըսաւ անոր, «Քաքարը հո՞ս կը սկսի: Ես կ’ուզեմ սկիզբէն սկսիլ և քաքար մը չինել:” Զաղացպանն ըսաւ, «Եթէ կ’ուզես սկիզբէն սկսիլ, պէտք է որ արտերուն մէջէն վազես և երթաս երկրագործներուն: Երկրագործը եզիպտացորեն կը բերէ ջաղացքս, ջաղացքս կ’աղայ զանիկա և ախր կ’ընէ նպարավաճառին համար, նպարավաճառը ախր կը ծախէ տուներու մէջ բնակող մարդոց, և ասոնք ախրէն քաքար կը չինեն:”

Աղջիկը արտերուն մէջէն երկրագործին վազեց և ըսաւ անոր, «Քաքարը հո՞ս կը սկսի: Ես կ’ուզեմ սկիզբէն սկսիլ և քաքար մը չինել:” Երկրագործն ըսաւ, «Սկիզբը անցեալ դարուն էր երբ իմ եզիպտացորենս ցանցել: Երբ բոլոր ձիւնը հալեցաւ, սերմն ցանցել: Եզիպտացորենին սերմէն բուսան եզիպտացորենին ցողունները: Բոլոր ամառը ասոնք մեծցան, մեծցան, մեծցան, բարձրացան, բարձրացան, բարձրացան, և երբ ամառն անցաւ, անոնցմէ գրիւններով եզիպտացորեն հաւաքուեցաւ: Ես եզիպտացորենը ջաղացպանին կը ծախեմ, ջաղացպանը գանիկա կ’աղայ ախր կ’ընէ, և ախրը նպարավաճառին կը ծախէ, նպարավաճառը ժողովուրդին ախր կը ծախէ, և ժողովուրդը անկէ քաքարներ կը չինէ: Բայց կը տեսնես որ եթէ սկիզբէն սկսիս, քաքար մը չինելու համար ամբողջ ամառ մը պէտք է: Եթէ կ’ուզես սկիզբէն սկսիլ, եկուր առաջիկայ դարուն և եզիպտացորենի սերմ ցանէ:”

Ասիկա այնչափ մը գործ էր որչափ կրնար կատարել փոքրիկ աղջիկ մը, բայց տակաւին շատ հեռու էր քաքարը չինելու սկիզբէն: Սկիզբը գտնելու համար, պէտք էր որ աղջիկը ետ երթար արտերուն մէջէն տարուէ տարի, դարերով, եզիպտացորենին սերմը և սերմէն առաջ քաղուած հունձքը գտնելու, և այսպէս պէտք էր շարունակէր հարիւրաւոր և հազարաւոր տարիներ երկրին մէկ ծայրէն միւսը, ուր որ ցանուած և անած է անիկա, մինչև որ վերջապէս գտնէր եզիպտացորենին առաջին ցողունը որ բուսած է երբեք, «ան որը որ Տէր Աստուած


երկիրն ու երկինքը ըրաւ, ու դաշտին բոլոր բոյսերը՝ դեռ երկրի վրայ չեղած, և դաշտին բոլոր խոտը՝ դեռ չբուսած:” Ին. Բ. 4, 5: Ահա հոս է քաքարին սկիզբը, ինչպէս որ հոս է ամէն մէկ ուրիշ բանի սկիզբը: Աստուածաշունչին առաջին գիրքը Ինունը կը կոչուի, որ կը նշանակէ «Սկիզբ» և երբ կը բանանք զանիկա, կը կարգանք, «Սկիզբէն Աստուած:”



ԶՈՒՆՈՒՆԵՐ

Հարաւային Ափրիկէի աւելի պատերազմատէր ցեղերուն մէջ առաջնութիւնը Զուլուններուն արուելու է: Անոնք նախորդներն են թրանսվալի Պուրերուն, որոնց հետ, ինչպէս նաև Անդրիացուց հետ, յաճախ կուրենր

ները: Անոնց համար դիւրին է իրենց գեղերուն տեղերը փոխել երբ փափաքելի երևնայ: Զուլունները ցորեն կը ցանեն իրենց քիչ պէտքին բաւական ըլլալու չափ միայն: Իրենց տեստը արջառ է, զորոնք առաջ կը յափշտակէին իրենց աւելի խաղաղասէր դրացիներէն: Ամերիկեան Պորտ Բնկերութիւնը յաջողակ առաքելութիւն մը ունի Զուլուններուն մէջ 23 եկեղեցիով, 2,400 եկեղեցույ անդամներով և գրեթէ 9,000 ժողովուրդով: Անոնց կայաններէն մէկը թրանսվալի Երանեսպըրկ քաղաքին մէջ է:



ՓՈՍՈՒՈՒՅԻՆ ՃՐԱԳԸ

Տղաք երբեմն կը խորհին թէ որով հետև պզտիկ են, բարիք չեն կրնար



ունեցած են: Կը պատկանին Պանթունտանիքին, որ կը պարունակէ նաև Մաթապէլէները, Մաշունաները, Քաֆիրները, Պէշուամանները և Պազութոները: Ասոնք բոլորը միևնոյն լեզուին գաւառաբարբառները կը խօսին: Զուլունները իբրև պատերազմիկ ժողովուրդ՝ իրենց առաջնութիւնը հաստատեցին ներկայ դարու սկիզբները, և Ափրիկէի հարաւային արևելեան կողմի մեծ մասին վրայ արչաւեցին: Անդրիացիք պատճառ ունին միտք բերելու ինսէնտլենհայի ճակատամարտը, որուն մէջ յարձակում կրեցին իրենցմէ բազմաթիւ Զուլուններէ, և իրենցմէ միայն քիչ կեանքեր ազատուեցան սպաննուելէ: Բայց Անդրիացիք յետոյ յաղթեցին, և անոնց Սէթվայո թագաւորը գերի բռնեցին: Զուլուի գիւղ մը Քրալ կը կոչուի: Պատկերէն կ’առնուի աղէկ գաղափար մը թէ ինչպէս կը չինուին տու-

րնել, թէ պէտք է որ սպասեն մինչև որ մեծնան: Բայց անցեալ օր բան մը կարգացի որ ինծի մտածել տուաւ թէ ամենէն պզտիկն ալ կրնայ բարիք ընել: Երբեք տեսած էք փոսուռայ (աթէլ պէօճէլի): Պզտիկ միջատ մըն է անիկա, որ մութին մէջ փոքրիկ լոյսով մը կը լուսաւորէ: Ճակատամարտ մը կար, և զինուորներէն ոմանք կը փախչէին թշնամիէն: Շուտով կորսնցուցին իրենց ճամբան: Իրենց հետ ունէին փոքրիկ գործիք մը որ կողմնացոյց կը կոչուի, և կրնար ցուցնել ճամբան, միայն թէ գիշերն այնքան մութ էր որ չէին կրնար կողմնացոյցին ասեղին ցուցած ճամբան տեսնել: Չէին համարձակեր լոյս կրել իրենց հետ, որ չըլլայ թէ թշնամին տեսնէ զիրենք և իրենց ետևէն իյնայ: Այդ միջոցին զինուորներէն մէկը տեսաւ որ պզտիկ փոսուռայ մը լոյս կու տար խոտերուն մէջ, վերցուց զա-

նիկա և դրաւ կողմնացոյցին վրայ, և ասեղին ցուցած ճամբան տեսնելու չափ լոյս եղաւ: Այն ատեն զինուոր- ները գիտցան թէ ո՛ր կողմը կ'իյնար իրենց բնակավայրը: Շատ ուրախա- ցան, և յառաջ գացին մինչև որ տուն եկան:

Չէք կարծեր թէ այս մարդիկը խոր- հեցան թէ փոքրիկ փոսուռայ մը բա- րեք կրնայ ընել: Եւ փոքրիկ տղայ մը չը կրնար փոսուռային չափ բան ընել: Պայծառ և փայլուն ժպիտներ, հաճելի խօսքեր և օգնութեան գործեր աղու մը լոյս տալու կերպերն են և բոլոր տունը երջանիկ կ'ընեն:

→→→ՅՕԵԵԵ←←

ՏՂՈՒ ՄԸ ՓՈՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Անգղիացի Տղոց վաշտին(\*) քանի մը անդամներուն առաջարկուեցաւ թուղթեր գրել միջուժի համար որ մօտ ատեններ տեղի պիտի ունենար: Գրութիւնները պատասխան պիտի ըլ- լային սա հարցումին թէ «ի՞նչ են տղի մը գլխաւոր փորձութիւնները, և ի՞նչ է անոնց ընդդիմանալու լաւագոյն կեր- պը?» Փրօֆէսոր ճորճ Էյարմ Սմիթհ ընտրուեցաւ որ քննէ գրուածները, և քանի մը շահեկան բաներ կը գրէ անոնց վրայ Տղոց վաշտի Լոսթրիին մէջ:

«Չեմ յիշեր որ երբեք քննած ըլ- լամ աւելի խորունկ և սրտազբաւ գրութիւններ: Մէկ երկուքը աարի- քոտ մարդոց խրատներուն երկար և խնամեալ ամփոփումներն են, և գրե- թէ ամէն ընթերցողի կը յիշեցնեն վարժապետներու և գիրքերու խօս- քերը: Բայց ասոնք բացառութիւն են, և միւս գրութիւնները ամէնն ալ ի- րապէս տղայոց յատուկ գրուածներ են: Եւ ամէնն ալ կը ներկայացնեն տասներկուքէ մինչև տասներօթը տա- րեկան տղոց փորձառութեան շատ թարմ և կենդանի պատկերը: Այս տղոց մեծ մասը ստիպուած են գոր- ծել իրենց ապրուստին համար և կեանքը դիւրին կամ ապահով չեն գտներ:»

Ամենէն աւելի յաճախ յիշուած կամ նկարագրուած փորձութիւններն են բարկութիւն, նախանձ, չարակամու- թիւն, նենգութիւն դպրոցին մէջ, ստախոսութիւն, գողութիւն, երդում, հայհոյութիւն, ծխել, գրաւ դնել (պահս թութմագ), բաղդախաղ, դըպ- րոցէ բացակայութիւն, ծուլութիւն, անհոգութիւն, մեծերը արհամարհել:

(\*) Այս անունով կը կոչուի ընկերակցութիւն մը որուն նպատակն է տղաքն առաջնորդել բա- րոյական և բարեպաշտական կեանքի, կրօնական հրահանգութիւն միացնելով մարմնամարզական զբօսաձեւերու և զինուորական կրթութեան:

ճնողքներու և վարժապետներու ան- հնազանդ ըլլալ, գէշ գիրքեր կար- դալ: Իսկ աւելի մեծ տղոց փորձու- թիւնն է խմուռք և անմաքուր վարք:

Տղոց այն դասը որմէ գրութիւններն եկան, իրենց ծոցը քիչ ստակ ունին, կամ բնաւ չունին. և ստակ գողնալու, և կամ բան գնել զրկուած ատեն սխալ հաշիւ ներկայացնելու փորձու- թիւնն ունեցողներ են: Եւ զարմանա- լի է որ անոնցմէ շատեր իրենց գրու- թեան մէջ յիշած էին այս փորձու- թիւնը: Ոմանք գրած էին թէ իրենց գողնալու և նենգելու փորձութիւնն եղած է իրենցմէ աւելի հարուստ տղոց հետ ընկերութիւնը: Բայց այս մեղ- քին գլխաւոր փորձութիւններն են բաղդախաղը (գումար) և գրաւ դնելը: Գրուածներէն քիչերը յիշած չեն ա- սոնք, և կը թուի թէ գլխաւոր փոր- ձիւններն են մեծ տղաք և մարդիկ:

Նկատուամբ խնդրին միւս կողմին թէ ի՞նչ է տղոց համար փորձութիւննե- րու ընդդիմանալու լաւագոյն կերպը, Փրօֆէսոր Սմիթհ սապէս կը գրէ:

«Գրութիւններուն մէջ հաղիւ կը գտնուի հատ մը որ շնորհակալութեամբ չի յիշէ խօսուած կամ մտքով մատուց- ուած ազօթքի արդիւնքները: Ասոր վրայ բնական կերպով մը գրած են տղաք, և ինձի կը թուի թէ անոնց իրական փորձառութեան արդիւնքն է: Անոնցմէ ոմանք նախ ազօթք ընե- լով կը մասնակցին Սուրբ Գրոց օրա- կան ընթերցման: Անոնք որ աւելի մանրամասնօրէն կը գրեն այս նիւթին վրայ, կ'ըսեն թէ ամբողջ զրուխ մը կարդալը իրենց ձանձրոյթ կու տայ: Բայց կը թուի թէ շատ տղաք գործ- նական մեծ օգուտ կը քաղեն երկու երեք համարներ զգուշութեամբ եր- կու երեք անգամ կարդալով առա- լօտները: Անոնք ամէնն ալ կը զգան թէ իրենց պարտքն է Աստուածաշուն- չը կարդալ:»

«Տղաք ունին համոզում մը թէ Աստուած կը տեսնէ զիրենք: Ես միշտ զգացած եմ թէ այս համոզումը տղոց մէջ աւելի զօրաւոր է քան չափահաս մարդոց մէջ: Այս բանին նկատմամբ ասիկա օգնութիւն մըն է փորձութեան առջև գտնուող տղոց: Բայց ևս աւելի բարձր հաւատքի նշաններ կը տեսնեմ անոնց վրայ թէ Աստուած, անոնց Հայրը, փտահոլութեամբ կը յանձնէ ա- նոնց իրենց գործերը, և նոյն իսկ երբ փորձութեան վտանգի կը հանդիպին, կը զգան թէ իրենց համար պատուաբեր է այս: Մէկը ո՛րչափ շնորհակալ ըլլայ կ'արժէ կրօնական այն դաստիարակու-

թեան համար որ պատճառ եղած է այս համոզման և տպաւորութեան: Նաև զարմացած եմ յաճախ կարդալով այն գրութիւններուն մէջ թէ, երբ Բրիտա- տոսի հնազանդելու հաստատ որոշու- մով կը մերժուի չար գործերու հրաւե- րը, գրեթէ իսկոյն կը կոտորի անոր ոյ- ժը: «Չար ընկերները կը հեռանան քեզմէ եթէ չընես անոնց քեզի առա- ջարկածը:» Ես հասկցած եմ թէ միայն երկու երեք անգամ «Ոչ» ըսելը բա- ւական է:»

ՄԱՅԻՍԻ ՀԱՆԵԼՈՒԿԻՒՆ ՊԱՏԱՍԻԱՆԸ

Բ	ա	բ	ւ
Ա	դ	ա	ր
Ղ	ւ	ւ	ի
Տ	ի	բ	է ու
Ա	ւ	ա	ւ է բ Տ
Ս	ւ	ւ	ւ է ի Ա
Ա	բ	ն	ւ է զ է ր
Ս	ւ	ւ	ւ է ք
Ա	փ	ւ	ք
ր	ւ	ո	ս

Լուծեցին, Կ. պրիտ. — Մկրտիչ Ս. Պոյա- ճեան, Կարպետ Ս. Պոյաճեան, Յովսէփ Պա- րութեան, Պ. Ս. Միկիբչյան, Վահան Ճ. Թովմասեան, Ե. Ս. Գաբրիէլեան: Զմեռ- նիս. — Լեւոն Յ. Գաբրիէլեան, Գաբրիէլ Ղա- րպեան, Գերմանական Որբանոցի ասնուհէք: Պարտիզակ. — Դաւիթ Կ. Պողոսեան, Պորոս Կ. Պողոսեան, Արտաշէս Հ. Բաշաեան, Սեդ- րաք Իյնէճեան, Մեսաք Գալճեան, Աբգար Հայկազեան, Մկրտիչ Տէր Յակոբեան, Ղ. Գուռ- տուրաճեան, Յ. Տ. Ղազարեան, Եղիազար Յ. Կա- րապետեան, Տէրգման Յ. Կարապետեան: Առաջա- զար. — Լուսնթագ Քիւֆճեան, Երզնկա. — Սեդ- րաք Շաքարճեան: Թալաւ. — Մարքուհի Մ. Գա- լուստեան, Ունեղիս Մ. Եարաբճեան, Վ. Ու- ղանեան, Հ. Օհանեան, Յ. Գալսեղեան, Հ. Մնչերեան, Կ. Խորասանճեան, Բարսեղ Տէր Բարսեղեան: Ինքի-Չարսանճագ. — Մ. Վարդա- պետեան: Կերբի. — Միսաք Ս. Խանթէմուր: Տէ- արղէքի. — Տէրգման Կ. Միկիբչյան, Խա- չատուր Անտոնեան:

ՀԱՆԵԼՈՒԿ ՍՈՒՐԲ ԳԻՌՔԵՆ

Սոցիալիստի մէկ առակը որ կը բազմանայ 59 տառերէ.

13.	21.	45.	5.	51.	45	Կրակ մըն է.
3.	9.	17.	29.	49.	23.	53 Լսելէն է.
4.	55.	39.	25.	35.	43	Չեռքերովը պա- տերուն կը փակըն.
7.	41.	59.	11.	37.	33	Կորնթոսի նաւա- հանգիստն էր.
57.	31.	27.	47.	29.	49	Եփեսոսի մէջ դըպ- րատուն մը ունէր.

Կը յուսամ թէ վերի թիւերուն տեղը գրուե- լու գիրքը դերուս պիտի գտնէք: Կը տեսնէք որ այդ թիւերը անոյգ են: Անոնց տեղ գրուելու գիրքը կարգով շարեցէք 1 թիւին համապատաս- խանող գիրքն սկսելով և գրի մը համար միջոց թողով (1 3 5 ևն.): Յետոյ այն միջոցները մէյմէկ գեր գրէք այնպէս որ կարդացուի Սոցի- ալիստի մէկ առակը:

Կ. պրիտ

Տարեկան բաժանորդական Թիւի համար, կանխիկ, ամեն տեղոյ քանակ:

Ամերիկայի Միտինստըք Արտաստեր ԿԻՒԿ Տնօրէն—Սթարկի

ԿՈՍՏՈՆԻՆՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱՆՈՒՅԻ ԱՆՆԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿԱՆՈՒՅԻ ԱՆՆԱՆԻ ԿԱՆՈՒՅԻ ԱՆՆԱՆԻ